ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.02.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 09/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի 08.02.2016թ ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-09/16 բողոք) և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 16.02.2016թ. թիվ 02/61-2272 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-09/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 15.02.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 08.02.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 12.11.2015թ. հայտարարվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը ցանկություն է հայտնել մասնակցել Ընթացակարգին:

Ընթացակարգը պետք է տեղի ունենար՝ www.armeps.am համակարգի միջոցով, իսկ հայտերի բացումը պետք է տեղի ունենար 23.11.2015թ. ժամը 14:15-ին:

Ընկերությունը «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան ու ժամկետում պատրաստել է գնման հայտը: Սահմանված ժամկետում Ընկերության համապատասխան աշխատակիցը բազմիցս փորձել է ներբեռնել պատրաստված հայտը www.armeps.am համակարգում, սակայն նշված համակարգը թույլ չի տվել ներբեռնել պատրաստի հայտը, քանի որ հայտը ծրագրից դուրս է թռել անհասկանալի պատճառով, իսկ ներբեռնելու բոլոր փորձերը անցել են ապարդյուն և վերջնական արդյունքում մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը հայտը չի ներբեռնվել անհասկանալի պատճառով:

Զգալով, որ հայտը ներբեռնելու՝ Ընկերության բազմաթիվ փորձերն անցել են ապարդյուն, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը, Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահից և քարտուղարից խնդրել է հայտերի ներկայացման վերջնաժամկետը հետաձգել, որպեսզի հնարավոր լինի հայտը ներկայացնել, սակայն տրվել է բացասական պատասխան:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 23.11.2015թ. ժամը 14:15-ին, որի արդյունքում Ընթացակարգի համակարգողից Ընկերությունը տեղեկացել է, որ Ընթացակարգի մյուս բոլոր մասնակիցների հայտերը չեն բացվել, այլ ընդամենը երևացել են վերջիններիս անունները: Երևանի քաղաքապետարանը նաև նշել է, որ թվարկված տեխնիկական խնդիրները կրել են համակարգային բնույթ:

Երևանի քաղաքապետարանը 26.11.2015թ. թիվ 61/2890 գրությամբ մեկ այլ կազմակերպությանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտերի բացման նիստը, որը նշանակված էր 23.11.2015թ., խափանվել է՝ www.armeps.am համակարգում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներին «գնահատել հայտերը» առաջադրանքը չգալու հիմքով, որի կարգավորման համար Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Իսկ բողոքաբեր Ընկերությանը, որպես մասնակից, մինչ օրս որևէ տեղեկատվություն չի տրամադրվել, որևէ արձանագրության կամ որոշման օրինակ չի տրամադրվել, որի պատճառով խախտվել են նաև ՀՀ օրենսդրության պահանջները:

Հետագայում պարզվել է, որ Ընթացակարգի շրջանակներում որոշ մասնակիցների հայտերը Ընթացակարգի հրավերի բացման նիստից մոտավորապես 20 օր անց անհասկանալի եղանակով բացվել են հերթականությամբ, որից հետո Երևանի քաղաքապետարանը շարունակել է Ընթացակարգը:

Կատարվել են նաև գնային առաջարկների գնահատում, անգամ՝ մասնակիցների միջև տարբեր չափաբաժինների համար կազմակերպվել են բանակցություններ և որոշվել 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունները: Եվ այս ամբողջ գործընթացը իրականացվել է առանց Ընկերության մասնակցության:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 3-րդ, 6-րդ, 48-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է մասնակցության իրավունքից՝ անկախ իր կամքից:

Ընկերությունը իր բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) խնդրել է ուսումնասիրել «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի կողմից հայտի չներբեռնվելու պատճառը և դադարեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը (չկայացած հայտարարել Ընթացակարգը):

Միևնույն ժամանակ, Ընկերությունը միջնորդել է որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որևէ որոշման կատարումը, քանի որ Ընկերությունը տեղեկություններ ունի, որ մինչ օրս որևէ պայմանագիր կնքված չէ:

«ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 12.02.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտարարել է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն և բողոքի մեջ արտացոլվել է թյուր բովանդակություն, քանի որ իրենց կողմից 23.11.2015թ. Ընթացակարգի մասնակցության հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ և անուշադրության պատճառով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է մեկ այլ ընկերության համար պատրաստված բողոքի նախագծի հիման վրա գրված բողոք և տեղի է ունեցել

տպագրական սխալ, հետևաբար իրենք հրաժարվում են ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 08.02.2016թ. ներկայացված հիշյալ բովանդակությամբ բողոքից:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 16.02.2016թ. թիվ 02/61-2272 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, «Վի Էմ Ջի և որդիներ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) համաձայն www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպման (կցվում է) «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել 23.11.2015 թվականին ժամը 11:57-ին, մինչդեռ Ընկերությունը 08.02.2016 թվականին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքով պնդել է, որ Ընկերությունը բազմիցս փորձել է վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով պատրաստված հայտը բեռնել www.armeps.am համակարգում, սակայն բոլոր փորձերն անցել են ապարդյուն:

Պատվիրատուն նշել է, որ բողոքը իրականությանը չի համապատասխանում, քանի որ Ընկերության կողմից հայտը ներբեռնվել է համակարգ և իր կողմից ներկայացված հայտը բացվել է 07.12.2015 թվականին և իրականացվել է ներկայացված հայտի գնահատում:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի նիստի բացումը, որը նշանակված էր 23.11.2015 թվականին, խափանվել էր www.armeps.am համակարգում գնահատող հանձնաժողովների անդամներին (գնահատել հայտերը) առաջադրանքը չգալու հիմքով, որի կարգավորման համար Երևանի քաղաքապետարանը

համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն (գրությունը Ձեզ տրամադրվել է 22.12.2015 թվականին N 61/3003 գրությամբ):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.12.2015 թվականի թիվ 1/73-1/37743-15 գրությամբ տրամադրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ–ից ստացված գրությունը, որով տեղեկացրել են, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նշված տեխնիկական խնդիրն ուղղվել է, ուստի անհրաժեշտ է նշված ընթացակարգը շարունակել էլեկտրոնային եղանակով:

3. ԳԲԽ-09/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.02.2016թ. եզրակացությունը և առաջարկել՝ «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի 08.02.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-09/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-09/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի 12.02.2016թ. ժամը 17:00-ի նիստի ժամանակ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներկայացման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ ***«ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «23.11.2015թ. ժամը 11:57:09» -ին***:

3. ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի 12.02.2016թ. ժամը 17:00-ի նիստի ժամանակ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. ժամը 10:00-ի թիվ 2 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին էլեկտրոնային համակարգով (www.armeps.am) հայտեր են ներկայացրել թվով 9-ը մասնակից, որոնց շարքում է նաև «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի 08.02.2016թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի կողմից ներկայացված www.armeps.am համակարգով հայտերի ներկայացման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպումը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. ժամը 10:00-ի թիվ 2 արձանագրության 1.2-րդ կետը, ինչպես նաև հիմք ընդունելով ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի 12.02.2016թ. ժամը 17:00-ի նիստի ժամանակ «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի ներկայացուցչի հայտարարությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է՝ ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի 12.02.2016թ. ժամը 17:00-ի նիստի ժամանակ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ ***«ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «23.11.2015թ. ժամը 11:57:09» -ին***: Նույն նիստի ժամանակ Պատվիրատուի կողմից ներկայացվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. ժամը 10:00-ի թիվ 2 արձանագրությունը, որի 1.2-րդ կետի համաձայն՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին էլեկտրոնային համակարգով (www.armeps.am) հայտեր են ներկայացրել թվով 9-ը մասնակից, որոնց շարքում է նաև «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ՍՊԸ-ն:

ԳԲԽ-09/16 բողոքը քննող հանձնաժողովի 12.02.2016թ. ժամը 17:00-ի նիստի ժամանակ «ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի ներկայացուցիչը հայտարարել է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն և բողոքի մեջ արտացոլվել է թյուր բովանդակություն, քանի որ իրենց կողմից 23.11.2015թ. Ընթացակարգի մասնակցության հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ և անուշադրության պատճառով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է մեկ այլ ընկերության համար պատրաստված բողոքի նախագծի հիման վրա գրված բողոք և տեղի է ունեցել տպագրական սխալ, հետևաբար իրենք հրաժարվում են 08.02.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված հիշյալ բովանդակությամբ բողոքից:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջների խախտում և Ընկերության 08.02.2016թ. բողոքը առարկայազուրկ է, ուստի այն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՎԻ ԷՄ ՋԻ և որդիներ» ԲԲԸ-ի 08.02.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամ՝ **Չիլինգարյան Վիգեն**